բը, մեծ շուքով, պիտի անցնի փողոցներից ողջունելու համար Հայաստանի աղնիւ քաղաքացիներին:

Երեկոյեան Կրկէսի բացումը:

Գալա:

Զտեսնուած նորութիւններ!!!

ԽՈՋԸ!!!

Այդ խոզը առաջնակարգ արտիստ է, շատ մարդկանցից աւելի խելացի: Ամէն բան հասկանում է, ամէն բան անում է: Կլոուններ, ձիեր, դժոխային մօտօսիկլիստ, տրապէզ եւայլն.

Ճոխ բուֆետ կրկէսում

Մատչելի գներ

* * *

Կարմիր այս թղթերը վայր էին ընկնում ձիւնի վրայ եւ յօրանջող փողոցին տօնական տեսք տալիս:

Երեւանցիները կարդում էին, խումբ-խումբ կանգ առնում, խօսում, ծիծաղում, մեկնաբանում:

Դարաշրջան է՝ Հայաստանը երբե՛ք կրկէս չէր տեսած:

* * *

Ժամը չորսի մօտերը Կոնդի կողմից չոր հով էր իջնում Խորհրդային մայրաքաղաքի վրայ: Զնայած դրան, բազմաթիւ քաղաքացիներ՝ դիտակից եւ անդիտակից՝ ժողվուել էին մայթերի վրայ եւ անհամբեր սպասում էին խոզին:

Դիտակից քաղաքացիները աշխատում էին իրենց մեկնաբանութիւնների մէջ օրուան դէպքին ընկերաբանական խոր իմաստ տալ, տնտեսական եւ մարքսիստական ինչ ինչ ազդակներ էին որոնում, պատմական դիալիկտիկան բերում խառնում էին մօնիստական աշխարհահարեացքի հետ: Յեղափոխութեան նուաճումները այնքա՞ն մեծ էին, որ խոզերն իսկ սկսել էին դիտակցիլ:

— Այո՛, եւ ինչո՞ւ խոզերը չպիտի դիտակցէին. դա ի՞նչ հնամաշ նախապաշարումներ են... Խոզը եւս մարդ է, այսինքն՝ եթէ կենդանաբանական տեսակէտից վերցնենք, ռեֆլեքսների օրէնքի հիման վրայ, մարդը եւս խոզ է: Տրոցկին մի տեղ ասում ա...

Անդիտակից քաղաքացիները ֆանտաստիկ բաներ էին պատմում:

— Կայարանում երբ խոզը գնացքից իջեցնում էին՝ մէկը տեսել ա... Խոզը խոզ չի, այլ հիպօպօտամ: Հիպօպատա՞մը ինչ է... Ասում են, մեր մէջ մնայ, անգլիացիներն են ղրկել, մի տեսակ ծպտեալ կենդանի է, հակաբոլշեւիկեան պրոպագանդի համար: Հը՛, իսկի՛ էլ չէ, որովհետեւ խոզ չի, այլ մի տեսակ ուղտ, որ ռուսերէն է հասկանում: Մարդը իր ականջով լսել ա՝ խօսում ա...

Անկեղծօրէն հետաքրքրուածները ժողովրդի կանայքն էին եւ երախաները: Լուռ, միշտ էլ զարմացած, ներքնապէս տարակուսանքով լեցուն, տեսնելու ծարաւ:

Զեկայի անդամները շրջում էին, ականջ դնում:

Յանկարծ, Պետական Թատրոնի առջեւ կանգնած խմբերը սկսան դէպի վար վազել: Թմբուկի եւ բորոդանի ձայն լսուեց: Ամբողջ փողոցը շարժուեց: Գալի՛ս է, գալի՛ս է,... Զնայած ցրտին, պատուհանները բացուեցին, պատշգամները լեցուեցին: Վարը, փողոցում, ամէն մարդ վազում էր, ցատկելով, հրմշտկելով, շունչը կտրուած: Յետ մնացած պառաւ կանայք աղմկով շրխկացնում էին իրենց փափուշները, երախաները վայր էին ընկնում ու լալով վեր բարձրանում եւ վազում:

Շուկայի կողմից խոզը գալիս էր:

Շքերթը առաջնորդում էին երկու հսպիտներ: Լայն, ծունկերի առջեւ կանգ առնող տաբատ, սրածայր գլխարկ, ճերմակ փոշիով ներկուած երեսներ, յօնքերը եւ աչքերը սեւ ներկով գծուած, նրանք ծամածռութիւններ էին անում, բորոդանի մէջ փչում, թմբուկ զարնում: Նրանց ետեւից գալիս էին մի քանի հոգի կրկէսի լարախաղացների եւ ըմբիշների հագուստով: Մեծ մասամբ յաղթանդամ մարդիկ էին՝ թեւերը բաց, ուժեղ մկաններով, լայն ուսերով եւ փոքրիկ գլխով:

Ու ահա խո՛զը, օրուան հերոսը, մեծ արտիստը:

Խոզը պարզապէս խոզ էր: Ահագին մի խոզ, ճարպի եւ մսերի մէջ կորած, կարճ ոտքերով, երկայն դունչը վար կախած, չինացու փոքրիկ աչքերով, կարմրամարմին, փայլուն, ականջները վեր տնկած: Ուրիշ մի հսպիտ նըստել էր նրա վրայ՝ ոտքերը վեր բռնել, որպէս-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան